ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՊՈԼԻՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԳՅՈՒՄՐՈՒ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՇԻՆԱՆՅՈՒԹԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N ՀԱՊՀ ԳՄ ԳՀԱՊՁԲ-19/6-3

ք. Երևան «06» հունիս 2019թ.

«Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան» հիմնադրամը ի դեմս ռեկտոր Ռ.Զ.Մարուխյանի, որը գործում է համալսարանի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և «Պայքար Վալեսյան Խորենի» ԱՁ-ն, ի դեմս տնօրեն Պայքար Վալեսյանը, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացույցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են **10** օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով,

ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի.

2.1.8 Ընդունել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 1225530 **(մեկ միլիոն երկու հարյուր քսանհինգ հազար հինգ հարյուր երեսուն)** ՀՀ դրամ : Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.2 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

4.2 Հիմնական միջոց հանդիսացող ապրանքի (Չափարաժին 1՝ ձեռքի էլեկտրամեխանիկական գործիքներ) համար երաշխիքային ժամկետ է սահմանվում Գնորդի կողմից ապրանքն ընդունելու օրվան հաջորդող օրվանից հաշված 365 օրացուցային օրը: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել մատակարարված ապրանքի թերություններ, ապա Վաճառողը պարտավոր է իր հաշվին, Գնորդի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նպատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձևոք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ

սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Պայմանագիրը կազմված է __6__ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ

«Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան» հիմնադրամ
Հասցեն՝ ք. Երևան, Տերյան 105
Բանկը՝ «ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ Գյումրի մասնաճյուղ
Հ/Հ 1150001469160100
ՀՎՀՀ 01504054

Ռեկտոր Ռ.Հ.Մարուխյան

ՎԱՃԱՌՈՂ

«Պայքար Վալեսյան Խորենի» ԱՁ
ք.Գյումրի, Իսահակյան պուրակ 6Ա
«Կոնվերսբանկ» ՓԲԸ
Հ/Հ 193009778104000
ՀՎՀՀ 57338316

Պ. Վալեսյան ____________
/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 1
«06» հունիսի 2019թ. կնքված
«ՀԱՊՀ ԳՄ ԳՀԱՊՁԲ-19/6-3» ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը և ապրանքային նշանը**	արտադրողի անվանումը և ծագման երկիրը	Ապրանքի տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	միավոր գինը/ ՀՀ դրամ	ընդհանուր գինը/ ՀՀ դրամ	Ընդհանուր քանակը	Մատակարարման հասցեն	Մատակարարման ենթակա քանակը	Մատակարարման Ժամկետը
1	42651200	ձեռքի էլեկտրամեխանիկական գործիքներ Ingco	Ingco Չինաստան	Ձեռքի էլեկտրական պտուտակիչ (шурупаверткa): Լարով,առանց կուտակիչի, 220В, 50Гц, 260Вт, По 0 - 800 об/мин. Фмакс - 10мм, стал Ф 10мм: Հանդիսանում է հիմնական միջոց:	հատ	21500	21500	1	ք. Գյումրի, Մ. Մկրտչյան փողոց-2	1	Պայմանագիրը կնքելուց հետո 30 օրացուցային օրվա ընթացքում:
2	44111400	կախովի առաստաղ «Կախովի առաստաղ»	Կոնֆորտ ՀՀ	Կախովի առաստաղ՝ պլաստե, լայնությունը 25սմ, երկարությունը 6.0մ, հաստությունը 8.0մմ, առանց կարի, գույնը և նախշերը ըստ պատվիրատուի պատվերի:	մ²	1790	166470	93.0	ք. Գյումրի, Մ. Մկրտչյան փողոց-2	93.0	Պայմանագիրը կնքելուց հետո 30 օրացուցային օրվա ընթացքում:
7	44116300	ԴՍՊ, 366x183սմ չափերով, 18մմ հաստությամբ ԴՍՊ	ԴՍՊ Թուրքիա	Բնափայտատաշեղային սալիկներ՝ արտադրված սոսնձանյութով փայտե մասնիկների տաք հարթ պրեսավորման եղանակով, երկկողմանի լամինացված, առանց փայլի, 18մմ հաստությամբ, չափերը՝ 366սմ x 183սմ, բարձր խտությամբ, քաշը ոչ պակաս 13 կգ/մ3: Գույնը ըստ պատվիրատուի պատվերի:	հատ	28750	115000	4	ք. Գյումրի, Մ. Մկրտչյան փողոց-2	4	Պայմանագիրը կնքելուց հետո 30 օրացուցային օրվա ընթացքում:

8	44118300	թիթեղ՝ մետաղական «Թիթեղ ցինկապատ»	Թիթեղ ցինկապատ ՌԴ	թիթեղ՝ մետաղական,ցինկապատ 1մ*2մ*0.5մմ չափերի	մ²	2500	225000	90.0	ք. Գյումրի, Մ. Մկրտչյան փողոց-2	90.0	Պայմանագիրը կնքելուց հետո 30 օրացուցային օրվա ընթացքում:
9	44118400	Պրոֆնաստիլ Գոլդշին	Գոլդշին ՍՊԸ <<	Պրոֆնաստիլ, 0,4մմ-ից ոչ պակաս հաստության ցինկապատ թիթեղից: Կոշտության կողերը (ալիք) սեղանաձև: Ալիքների բարձրությունը՝ ոչ պակաս 10մմ-ից, թեքությունը՝ հորիզոնական մասի նկատմամբ ոչ ավել 135 աստիճանից, հորիզոնական մասերի երկարությունը՝ 20մմ-ից ոչ ավել, քայլը՝ /ալիքի հորիզոնական մասի կենտրոնից մինչև հաջորդ ալիքի հորիզոնական մասի կենտրոնը/ ոչ ավել 110մմ-ից:	մ²	1996	49900	25.0	ք. Գյումրի, Մ. Մկրտչյան փողոց-2	25.0	Պայմանագիրը կնքելուց հետո 30 օրացուցային օրվա ընթացքում:
10	44119100	տախտակ	ՌԴ	Տախտակ կողահան, չամ տեսակի, հաստությունը՝ 25մմ, լայնությունը ոչ պակաս 120մմ-ից,երկարությունը 5-6մ, հավասար երկարության,	մ³	168500	168500	1.0	ք. Գյումրի, Մ. Մկրտչյան փողոց-2	1.0	Պայմանագիրը կնքելուց հետո 30 օրացուցային օրվա ընթացքում:
11	44171200	թերթեր (շինարարության)	Կոնֆորտ <<	Սպունգ շինարարական, նախատեսված լամինատե մանրահատակների համար, մեկ կողմը ֆոլգայապատ, լայնությունը 1,0 մ, հաստությունը 3,0 մմ:	մ²	247,2	27200	110	ք. Գյումրի, Մ. Մկրտչյան փողոց-2	110	Պայմանագիրը կնքելուց հետո 30 օրացուցային օրվա ընթացքում:
12	44171300	երիզներ / շինարարական/	Կոնֆորտ <<	Շրիշակ պլաստմասե: Նախատեսված լամինատե մանրահատակի համար, երկարությունը 2.5մ, բարձրությունը 6սմ, գույնը ըստ պատվիրատուի պատվերի	մետր	198	9900	50.0	ք. Գյումրի, Մ. Մկրտչյա	50.0	Պայմանագիրը կնքելուց հետո 30

									ն փողոց-2		օրացուցային օրվա ընթացքում:
13	44191700	այլ զանազան շինարարական նյութեր Գիպսոֆլեքս	Շեն <<	Գիպսոֆլեքս 30կգ պարկերով, գիպսային դեկորատիվ սվաղ ներքին աշխատանքների համար: Նախատեսված ծածկել բետոնե, աղյուսե, պենզաբլոկից, ցեմենտ-ավազային սվաղով և գաջած պատեր:	կգ	78,8	28400	360,0	ք. Գյումրի, Մ. Մկրտչյան փողոց-2	360,0	Պայմանագիրը կնքելուց հետո 30 օրացուցային օրվա ընթացքում:
14	44221140	Դռներ Մետաղապլաստե դուռ	Անդրեաս և ընկերներ ՍՊԸ <<	Դռներ մետաղապլաստմասից, սպիտակ գույնի, ապակիով, ներսիր փականով, մեկ փեխնանի, բարձրությունը 219սմ, լայնությունը 97,4սմ:	մ²	51875	332000	6,4	ք. Գյումրի, Մ. Մկրտչյան փողոց-2	6,4	Պայմանագիրը կնքելուց հետո 30 օրացուցային օրվա ընթացքում:
15	44123600	կպչուն ժապավեներ	<<	Ինքնակպչուն շինարարական ժապավեն, թղթյա, նախատեսված ներկարարական աշխատանքների համար, սպիտակ գույնի, գլանափաթեթով, 50մմ*20մ չափերի	հատ	230	2300	10	ք. Գյումրի, Մ. Մկրտչյան փողոց-2	10	Պայմանագիրը կնքելուց հետո 30 օրացուցային օրվա ընթացքում:
16	4442368	շինարարության մեջ օգտագործվող զանազան այլ ապրանքներ Ստեռն	Թուքիա	ՄԴՖ-ի սոսինձ,երկկոմպոնենտ սոսինձ, չորացնող նյութը չափաբարված 400 մլ տարայի մեջ, իսկ սուպեր սոսինձը չափաբարված 100 գր տարայի մեջ, (չորացնող նյութը, սուպեր սոսինձը և տակդիրը միասին 425գր.)	կգ	3294,1	14000	4,25	ք. Գյումրի, Մ. Մկրտչյան փողոց-2	4,25	Պայմանագիրը կնքելուց հետո 30 օրացուցային օրվա ընթաց

											բում:
18	4442368	Շինարարության մեջ օգտագործվող գանազան այլ ապրանքներ Ստեռն	Թուրքիա	Փրփուր (пена) 750միլիլիտր տարողությամբմեկ հատը 835գր):	կգ	2036	13600	6,68	Ք. Գյումրի, Մ. Մկրտչյան փողոց-2	6,68	Պայմանագիրը կնքելուց հետո 30 օրացուցային օրվա ընթացքում:
19	44511260	Հղկաթուղթ	Շվեցարիա	Հղկաթուղթ: Համար 24 , 20մմ լայնության	մ²	5475	21900	4.0	Ք. Գյումրի, Մ. Մկրտչյան փողոց-2	4.0	Պայմանագիրը կնքելուց հետո 30 օրացուցային օրվա ընթացքում:
20	44511260	Հղկաթուղթ	Շվեցարիա	Հղկաթուղթ: Համար 180 , 20մմ լայնության	մ²	4450	8900	2,0	Ք. Գյումրի, Մ. Մկրտչյան փողոց-2	2,0	Պայմանագիրը կնքելուց հետո 30 օրացուցային օրվա ընթացքում:
22	44531100	պարուրակավոր ամրացնող դետալներ	Չինաստան	Պտուտակ, 4,2*32, ինքնաշաղափող /саморез/, ամրացման տափօղակով, մետաղական, ցինկապատ, նախատեսված թերթավոր մետաղների ամրացման համար.	հատ	5,9	5950	1 000	Ք. Գյումրի, Մ. Մկրտչյան փողոց-2	1 000	Պայմանագիրը կնքելուց հետո 30 օրացուցային օրվա ընթացքում:
23	44531100	պարուրակավոր ամրացնող դետալներ	Չինաստան	Պտուտակ, 4,2*41, ինքնաշաղափող /саморез/, ամրացման տափօղակով, մետաղական, ցինկապատ, նախատեսված թերթավոր	հատ	6,9	6950	1 000	Ք. Գյումրի, Մ.	1 000	Պայմանագիրը կնքելուց

				մետաղների ամրացման համար					Մկրտչյան փողոց-2		հետո 30 օրացուցային օրվա ընթացքում:
24	44531110	փայտի պտուտակներ	Չինաստան	Պտուտակ մետաղական, փայտի, սև, 3,5*32մմ	կգ	1854,5	3060	1,65	ք. Գյումրի, Մ. Մկրտչյան փողոց-2	1,65	Պայմանագիրը կնքելուց հետո 30 օրացուցային օրվա ընթացքում:
25	44531110	փայտի պտուտակներ	Չինաստան	Պտուտակ մետաղական, փայտի, սև, 3,5*51մմ	կգ	1968,5	5000	2,54	ք. Գյումրի, Մ. Մկրտչյան փողոց-2	2,54	Պայմանագիրը կնքելուց հետո 30 օրացուցային օրվա ընթացքում:
		Ընդամենը					1225530				

*Ապրանքի մատակարարման ժամկետը, իսկ փուլային մատակարարման դեպքում՝ առաջին փուլի մատակարարման ժամկետը, պետք է սահմանվի առնվազն 20 օրացուցային օր, որի հաշվարկը կատարվում է պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման ուժի մեջ մտնելու օրը, բացառությամբ այն դեպքի, երբ ընտրված մասնակցի հանձնաձայնում է ապրանքը մատակարարել ավելի կարճ ժամկետում:

ԳՆՈՐԴ

«Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան»
հիմնադրամ
Հասցե՝ [illegible] 105
Բանկ՝ [illegible] ՓԲԸ Գյումրի մասնաճյուղ
Հ/Հ [illegible]
ՀՎՀՀ [illegible]
Ռեկտոր [illegible]
/ստորագրություն/

ՎԱՃԱՌՈՂ

«Պայքար Վալեսյան Խորենի» ԱՁ
ք.Գյումրի , Իսահակյան պուրակ 6Ա
«Կոնվերսբանկ» ՓԲԸ
Հ/Հ 19300977810400
ՀՎՀՀ 57338316
Պ. Վալեսյան
/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 2
« 06 » հունիսի 2019 թ. կնքված
«ՀԱՊՀ ԳՄ ԳՀԱՊՁԲ-19/6-3 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	Ապրանքի դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2019 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում							
			հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	42651200	ձեռքի էլեկտրամեխանիկական գործիքներ	21500	21500	21500	21500	21500	21500	21500	21500
2	44111400	կախովի առաստաղ	166470	166470	166470	166470	166470	166470	166470	166470
7	44116300	ԴՍՊ, 366x183սմ չափերով, 18մմ հաստությամբ	115000	115000	115000	115000	115000	115000	115000	115000
8	44118300	թիթեղ՝ մետաղական	225000	225000	225000	225000	225000	225000	225000	225000
9	44118400	պրոֆնաստիլ	49900	49900	49900	49900	49900	49900	49900	49900
10	44119100	տախտակ	168500	168500	168500	168500	168500	168500	168500	168500
11	44171200	թերթեր (շինարարության)	27200	27200	27200	27200	27200	27200	27200	27200
12	44171300	երիզներ / շինարարական/	9900	9900	9900	9900	9900	9900	9900	9900
13	44191700	այլ զանազան շինարարական նյութեր	28400	28400	28400	28400	28400	28400	28400	28400
14	44221140	դռներ	332000	332000	332000	332000	332000	332000	332000	332000
15	44423600	կայծոն ժապավեններ	2300	2300	2300	2300	2300	2300	2300	2300
16	4442368	շինարարության մեջ օգտագործվող զանազան այլ ապրանքներ	14000	14000	14000	14000	14000	14000	14000	14000
18	4442368	շինարարության մեջ օգտագործվող զանազան այլ ապրանքներ	13600	13600	13600	13600	13600	13600	13600	13600

19	44511260	հղկաթուղթ	21900	21900	21900	21900	21900	21900	21900	21900
20	44511260	հղկաթուղթ	8900	8900	8900	8900	8900	8900	8900	8900
22	44531100	պարուրակավոր ամրացնող դետալներ	5950	5950	5950	5950	5950	5950	5950	5950
23	44531100	պարուրակավոր ամրացնող դետալներ	6950	6950	6950	6950	6950	6950	6950	6950
24	44531110	փայտի պտուտակներ	3060	3060	3060	3060	3060	3060	3060	3060
25	44531110	փայտի պտուտակներ	5000	5000	5000	5000	5000	5000	5000	5000

* Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:

ԳՆՈՐԴ

«Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան» հիմնադրամ
Հասցեն՝ ք. Երևան, Տերյան 105
Բանկը՝ «ՀԱՅԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ Գյումրի մասնաճյուղ
Հ/Հ 1150001469160100
ՀՎՀՀ 01504054
Ռեկտոր Ռ.Զ.Մարուխյան _____
/ստորագրություն/

ՎԱՃԱՌՈՂ

«Պայքար Վալեսյան Խորենի» ԱՁ
ք.Գյումրի , Իսահակյան պուրակ 6Ա
«Կոնվերսբանկ» ՓԲԸ
Հ/Հ 19300977810400
ՀՎՀՀ 57338316
Պ. Վալեսյան _____
/ստորագրություն/
Կ.Տ